Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

Strategic Development Agency
Strategies for Development

«ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ
"LIVESTOCK DEVELOPMENT IN THE SOUTH OF ARMENIA" PROJECT

ԱՐՈՏՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՐՈՏՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ

ԵՐԵՎԱՆ 2021

ԱՐՈՏՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Արոտային տարածքներում գոյություն ունեցող ենթակառուցվածքները ժամանակի ընթացքում բնական գործոնների ներազդեցության, ինչպես նաև մարդու, կենդանիների գործունեության արդյունքում ենթարկվում են որոշակի մաշվածության և կարիք ունեն խնամքի, վերանորոգման ու պահպանման: Այս բոլոր խնդիրների բացահայտման և արոտների ենթակառուցվածքների վիճակի գնահատման ու վերահսկման նպատակով իրականացվում է արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգ, ինչի արդյունքներից ելնելով կազմակերպվում են արոտների ենթակառուցվածքների պահպանման, սպասարկման ու վերանորոգման աշխատանքները:

Սույն ուղեցույցը նախատեսված է աջակցելու տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ) կազմակերպել և իրականացնել վերոնշյալ աշխատանքները, ինչպես նաև գնահատել աշխատանքների իրականացման ծախսերը՝ համայնքի բյուջեում դրանք ներառելու նպատակով:

Ուղեցույցը մշակվել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից իրականացվող և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից ֆինանսավորվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի աջակցությամբ:

Բովանդակություն

Արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգ 4

Արոտների ենթակառուցվածքների նախապատրաստման,
շահագործման և կոնսերվացման կանոններ 6

Ձրախմոցի շահագործում և խնամք 6

Մակատեղի շահագործում և խնամք 7

Անասնապահի կացարանի շահագործում և խնամք 8

Դաշտամիջյան ճանապարհի շահագործում ու խնամք 9

Արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգի,
սպասարկման և վերանորոգման համար նախատեսված
աշխատանքները ֆինանսական արտահայտությամբ 10

Մոնիթորինգային այց 10

Ձրախմոցի սպասարկում և վերանորոգում 11

Մակատեղի սպասարկում և վերանորոգում 12

Անասնապահի կացարանի սպասարկում և վերանորոգում 14

Դաշտամիջյան ճանապարհի սպասարկում և վերանորոգում 16

Հավելված 1. Արոտների ենթակառուցվածքների
գնահատման հարցաթերթ 18

Հավելված 2. Տես ներդիրում
Հավելված 3. «Արոտների ենթակառուցվածքներից օգտվելու
և շահագործման կանոններ» թերթիկ 20

Հավելված 4. Գալիք տարվա համար արոտների
ենթակառուցվածքների պահպանման, սպասարկման
և վերանորոգման ընդհանուր ծախսի հաշվարկի օրինակ 27

Արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգ

Արոտային շրջանի ընթացքում արոտների ենթակառուցվածքների օգտագործումը արդյունավետ պլանավորելու, անսարքությունները ժամանակին բացահայտելու և դրանց վերանորոգման ու կոնսերվացման աշխատանքները կազմակերպելու համար ՏԻՄ-երի կողմից իրականացվում է արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգ:

ՏԻՄ-երին առաջարկվում է արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգն իրականացնել համաձայն ստորև ներկայացված մոտեցման, ինչը թույլ կտա.

- արոտային շրջանի ընթացքում արդյունավետ պլանավորել արոտների ենթակառուցվածքների օգտագործումը;
- ժամանակին բացահայտել արոտների ենթակառուցվածքների անսարքությունները և կազմակերպել դրանց վերանորոգման ու կոնսերվացման աշխատանքները, ինչն իր հերթին թույլ կտա նվազեցնել արոտների ենթակառուցվածքների սպասարկման ծախսերը:

Արոտավայրերում գտնվող ենթակառուցվածքների վիճակի գնահատման ու վերահսկման նպատակով **ՏԻՄ համապատասխան աշխատակցի(-ների) կողմից տարեկան առնվազն 2 անգամ իրականացվում են մոնիթորինգային այցեր**: Այցերի ընթացքում լրացվում են գնահատման հարցաթերթեր (տես Հավելված 1) և արվում են ենթակառուցվածքի լուսանկարներ, ինչը թույլ է տալիս ամփոփ տեղեկատվություն հավաքել ենթակառուցվածքի վիճակի և դրանից օգտվող տնտեսությունների ու կենդանիների քանակի վերաբերյալ: Հավաքված տեղեկատվությունն ամփոփվում է ենթակառուցվածքների տվյալների շտեմարանում[1] (բազայում) (տես Հավելված 2):

Ֆինանսական միջոցների սղության դեպքում, ենթակառուցվածքների վերաբերյալ հավաքված տվյալները հնարավորություն են տալիս գնահատել համայնքում առկա ենթակառուցվածքների կարևորությունը և սահմանել դրանց վերանորոգման աշխատանքների առաջնահերթությունները:

Այցերի իրականացման ժամանակացույցը սահմանվում է հիմք ընդունելով տվյալ համայնքի բնակավայրերում **արոտային շրջանի մեկնարկի և ավարտի ժամկետները**: Մասնավորապես՝

ա) 1-ին այցն իրականացվում է աշնանը՝ արոտային շրջանի ավարտից հետո (տես ներքևում): Այս այցի ընթացքում գնահատվում է ենթակառուցվածքի վիճակը և իրականացվում է վերջինիս կոնսերվացում:

1 Տարիների ընթացքում հավաքագրված արդյունքները լրացվում են նույն շտեմարանում, որտեղ յուրաքանչյուր տարվա տվյալները հաջորդում են նախորդ տարվա տվյալներին:

Հավաքագրված տեղեկատվության հիման վրա՝ իրականացվում է յուրաքանչյուր ենթակառուցվածքի պահպանման, վերանորոգման, սպասարկման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկ և ներառվում է համայնքի հաջորդ տարվա բյուջեում:

բ) 2-րդ այցն իրականացվում է գարնանը՝ նախքան արոտային շրջանի մեկնարկը (տես ներքևում): Այս այցի ընթացքում գնահատվում է ենթակառուցվածքի վիճակը և իրականացվում են արոտային շրջանի նախապատրաստման միջոցառումներ: *Վիճակի գնահատման հիման վրա՝ ճշտվում է տվյալ ենթակառուցվածքի համար նախատեսված կոնկրետ աշխատանքների ծավալը և սահմանվում է աշխատանքների իրականացման ժամանակացույցը:*

Նախքան մոնիթորինգի մեկնարկը իրականացվում է պլանավորում, ինչը ենթադրում է համայնքի արոտավայրերում առկա ենթակառուցվածքների տեղադիրքի հիման վրա՝ այցելության գրաֆիկի կազմում:

Ենթակառուցվածքների մոնիթորինգին կարող են մասնակցել նաև տվյալ ենթակառուցվածքից օգտվող ֆերմերները, ովքեր թերություններ և անսարքություններ հայտնաբերելու դեպքում դրանց մասին կտեղեկացնեն ՏԻՄ-երին: ՏԻՄ-երին տեղեկացնելու համար ֆերմերներին կարելի է առաջարկել հետևյալ միջոցներից որևէ մեկը՝

- Զանգահարել համայնքապետարան,
- Գրել համայնքապետարանի Ֆեյսբուքյան էջին,
- Օգտագործել համայնքապետարանի կայքի «Գրանցել խնդիր» պատուհանը:

Հարկ է նշել, որ ենթակառուցվածքից օգտվող ֆերմերները մեծ ազդեցություն ունեն ենթակառուցվածքների պահպանման և սպասարկման գործում: Ուստի, ՏԻՄ-երին առաջարկվում է արոտի օգտագործման պայմանագրին կից ֆերմերներին տրամադրել «Արոտների ենթակառուցվածքներից օգտվելու և շահագործելու կանոններ» թերթիկը, որը ներկայացած է Հավելված 3-ում:

Առաջարկվում է նաև 1-ից ավել տարով պայմանագիր կնքող ֆերմերների պայմանագրում ներառել կետ՝ ըստ որի ֆերմերը պատասխանատու կլինի իր վարձակալած հանդամասում գտնվող ենթակառուցվածքի պահպանման և կոնսերվացման, ինչպես նաև իր գործունեության արդյունքում գրանցված անսարքությունների վերացման համար:

Արոտների ենթակառուցվածքների նախապատրաստման, շահագործման և կոնսերվացման կանոններ

Արոտների ենթակառուցվածքների խնամքի, պահպանման ու վերանորոգման աշխատանքների արդյունավետությունն ապահովելու նպատակով, գյուղատնտեսների և շինարարների կողմից մշակվել են կանոններ, որոնք կաջակցեն ՏԻՄ-երին կազմակերպել արոտների ենթակառուցվածքների շահագործումն ամբողջ տարվա ընթացքում:

Ջրախմոցի շահագործում և խնամք

Արոտային շրջանի մեկնարկից առաջ

1. Ուշադրություն դարձնել ջրհավաքների՝ կապտաժների ամբողջականությանը և այն մաքրել ձմռան ընթացքում հողի ու բուսական մնացորդների կուտակումներից: Եթե հայտնաբերվել են անսարքություններ՝ բետոնե կոնստրուկցիայի, կափարիչի կամ խողովակի վնասվածք, նախատեսել միջոցառումներ դրանք վերացնելու համար:
2. Ուշադրություն դարձնել կապտաժից դեպի ջրախմոց տանող խողովակների ու փականների ամբողջականությանը և ստուգել դրանց անխափան աշխատանքը: Եթե հայտնաբերվել են անսարքություններ, նախատեսել միջոցառումներ դրանք վերացնելու համար:
3. Հետևել ջրախմոցի ջրհավաք կիսախողովակի ամբողջականությանը: Եթե հայտնաբերվել է վնասվածք, նախատեսել միջոցառումներ դրանք վերացնելու համար:
4. Եթե ջրախմոցի ջրհավաք կիսախողովակի և մետաղական հենակների վրա առկա են կոռոզիայի ենթարկված հատվածներ, ապա անհրաժեշտ է այդ հատվածները մշակել և ջրակայուն ներկով ներկել:
5. Ջրախմոցի սպասարկման տարածքը մաքրել կուտակված գոմաղբից, բուսական մնացորդներից և այլ աղբից:

Արոտային շրջանում

1. Շահագործման ընթացքում ջրախմոցը զերծ պահել մամռակալումից, պարբերաբար մաքրելով հեռացնել բուսական գոյացությունները և անցանկալի առարկաները ջրհավաք կիսախողովակից:
2. Բացառել ջրային կուտակումները ջրախմոցի սպասարկման տարածքում: Եթե կուտակումը անսարքության հետևանք է, նախատեսել միջոցառումներ դրանք վերացնելու համար:

3. Արագ վերացնել շահագործման ընթացքում առաջացած մեխանիկական վնասվածքները: Տեղում անսարքության վերացման անհնարինության դեպքում, նախատեսել միջոցառումներ դրանք վերացնելու համար:

Արոտային շրջանի ավարտից հետո

1. Կրկնել «Արոտային շրջանի մեկնարկից առաջ» բաժնում ներկայացված գործողությունները:
2. Ջրախմոցի ջրհավաք կիսախողովակից և այն սպասարկող խողովակների համակարգից կատարել ջրի դատարկում:

Մակատեղի շահագործում ու խնամք

Արոտային շրջանի մեկնարկից առաջ

1. Ուշադրություն դարձնել մետաղական կոնստրուկցիաների, սոնիների, փականների և այլ դետալների ամբողջականության վրա: Անսարքություններ հայտնաբերելու դեպքում, նախատեսել միջոցառումներ դրանք վերացնելու համար:
2. Ամեն տարի կատարել սոնիների և փականների յուղման աշխատանքներ:
3. Վերացնել ձմեռային ժամանակահատվածում առաջացած ցեխի կուտակումները մակատեղի բոլոր դետալների վրայից:
4. Իրականացնել մետաղական կոնստրուկցիաների, սոնիների, փականների և այլ դետալների ախտահանում՝ ցողարկիչով ցողարկելով քիմիական ախտահանիչներով:

Արոտային շրջանում

1. Ուշադրություն դարձնել մակատեղի տարածքի ձնհալի, անձրևաջրերի և տարբեր տիպի մակերևութային հոսքերի հեռացմանը:
2. Շահագործման ընթացքում, ժամանակին կազմակերպել գոմաղբի հեռացումը՝ մետաղական դետալների հետ շփման արդյունքում կոռոզիան կանխելու նպատակով:
3. Ծածկի առկայության դեպքում, հետևել ծածկի մետաղական թիթեղների ամրացվածության աստիճանին՝ քամուց չվնասվելու նպատակով: Եթե հայտնաբերվել է անսարքություն և հնարավոր չէ այն տեղում վերացնել, ապա նախատեսել միջոցառումներ դրանք վերացնելու համար:
4. Իրականացնել պայքար արտաքին մակաբույծների դեմ՝ ցողարկիչներով ցողարկելով վնասատուների դեմ պայքարի միջոցներ:

Արոտային շրջանի ավարտից հետո

1. Ուշադրություն դարձնել մետաղական կոնստրուկցիաների, սոնիների, փականների և այլ դետալների ամբողջականության վրա: Անսարքություններ հայտնաբերելու դեպքում, նախատեսել միջոցառումներ դրանք վերացնելու համար:
2. Ստուգել ենթակառուցվածքի ամբողջականությունը և անհրաժեշտության դեպքում կատարել ներկման աշխատանքներ՝ աշնանային և ձմեռային խոնավ եղանակին մետաղական կոնստրուկցիաները կոռոզիայից պաշտպանելու նպատակով:
3. Իրականացնել մետաղական կոնստրուկցիաների, սոնիների, փականների և այլ դետալների ախտահանում՝ ցողարկիչով ցողարկելով քիմիական ախտահանիչներով:

Անասնապահի կացարանի շահագործում ու խնամք

Արոտային շրջանի մեկնարկից առաջ

1. Անասնապահի կացարանի տարածքի բարեկարգում՝
   ա) հիմնապատերի տակ կուտակված հողաշերտի ու աղբի հեռացում,
   բ) անձրևաջրերի, ձնհալից գոյացած ջրերի, տանիքից հոսող ջրերի և տարբեր տիպի մակերևութային հոսքերի հեռացման կազմակերպում:
2. Երկու տարին մեկ նախատեսել ներքին հարդարման աշխատանքներ՝ պատեր, հատակ:
3. Իրականացնել ախտահանում՝ ցողարկիչով ցողարկել քիմիական ախտահանիչներով:

Արոտային շրջանում

1. Ուշադրություն դարձնել, որ վառարանի տեղադրման համար օգտագործվի ծխատարը, այլ ոչ թե պատուհանը:
2. Շահագործման ընթացքում առաջացած խնդիրների վերացում՝ տանիք, առաստաղ, դուռ, պատուհան, փական, սոնի, ճաղավանդակ և այլն:

Արոտային շրջանի ավարտից հետո

1. Ձմեռային ժամանակահատվածում անասնապահի կացարանում բորբոսասնկերի բազմացումն ու զարգացումը բացառելու նպատակով

բացված վիճակում թողնել կացարանի օդանցքը՝ ապահովելով օդափոխությունը:

2. Իրականացնել ախտահանում՝ ցողարկիչով ցողարկել քիմիական ախտահանիչներով:

Դաշտամիջյան ճանապարհի շահագործում ու խնամք

Արոտային շրջանի մեկնարկից առաջ

1. Դաշտամիջյան ճանապարհների քայքայված հատվածների բարեկարգում՝

   ա) փլուզումների արդյունքում ճանապարհի վրա հայտնված քարերի և հողաթմբերի հեռացում:

   բ) սելավների, անձրևաջրերի, ձնհալի և մակերևութային հոսքերի ազդեցության արդյունքում առաջացած ջրափոսերի, էռոզիոն ակոսների և փլուզումների հետքերի վերացում:

   գ) ջրահեռացման խողովակներում հողային նստվածքի, կուտակված քարերի ու բուսական մնացորդների հեռացում, խցանումներից խուսափելու և կայուն ջրահեռացում ապահովելու համար:

Արոտային շրջանում

1. Իրականացնել ճամփեզրյա ջրահեռացման առուների մաքրում և բարեկարգում:
2. Մակերևութային ջրահոսքերի ազդեցության և գյուղատնտեսական տեխնիկայի անիվներից առաջացած ակոսային և գծային անհարթությունների վերացում՝ փոսալցումներ և հարթեցում:
3. Ճանապարհի խճապատում
4. Ջրահեռացման խողովակների գլխամասերում նախատեսված ջրհավաքի և ջրահեռացման բետոնային հատվածների ամբողջականության ապահովում:

Արոտային շրջանի ավարտից հետո

1. Ձմեռային ժամանակահատվածում դաշտամիջյան ճանապարհների քայքայումը նվազագույնի հասցնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքը:

Արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգի, սպասարկման և վերանորոգման համար նախատեսված աշխատանքները ֆինանսական արտահայտությամբ

Այս գլխում ներկայացված են արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգի, սպասարկման և վերանորոգման համար իրականացվող աշխատանքների տարեկան ծավալը և ֆինանսական գնահատականը: Վերջինի համար հիմք են ընդունվել 2020 թվականին նմանատիպ աշխատանքների համար կատարված ծախսերը:

Սույն գլխի նպատակն է ուղղորդել համայնքին, հաջորդ տարվա բյուջեն կազմելիս, ճիշտ գնահատել տվյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերը: Արոտների ենթակառուցվածքների մոնիթորինգն ու սպասարկման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ամբողջ տարվա ընթացքում, իսկ վերանորոգման աշխատանքներն՝ ըստ անհրաժեշտության:

Տարեկան ծախսերի ընդհանուր գնահատման համար հիմք են հանդիսանում համայնքի արոտավայրերում առկա ենթակառուցվածքների քանակը և դրանց վիճակի վերաբերյալ հավաքված մոնիթորինգային տվյալները: Օրինակը տես Հավելված 4-ում:

Մոնիթորինգային այց

Մոնիթորինգն իրականացվում է տարին առնվազն 2 անգամ՝ գարնանը և աշնանը: Մոնիթորինգի ծախսերը կախված են արոտներում առկա ենթակառուցվածքներ հասնելու երթուղու երկարությունից: Ենթադրվում է, որ մոնիթորինգային այցերն իրականացվում են ՏԻՄ ներկայացուցչի կողմից՝ համայնքապետարանին պատկանող ավտոմեքենայով, ուստի այս միջոցառման համար հաշվարկվում է միայն նյութածախս:

Նկարագիր	**Չափման միավոր**	**Քանակ**	**Միավորի գին** (դրամ)	**Ընդ. արժեք** (դրամ)
տրանսպորտային ծախսեր՝ բենզին («Lada4x4»-ի համար)	լ/կմ	0,15	0,15լ-ին համարժեք	0,15լ-ին համարժեք

Ջրախմոցի սպասարկում և վերանորոգում

Ջրախմոցի սպասարկման և վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ անհրաժեշտության: Ստորև ներկայացված է 500մմ տրամագծով կիսախողովակից **12մ երկարությամբ** ջրախմոցի համար իրականացվող ընթացիկ սպասարկման և վերանորոգման աշխատանքների հաշվարկը:

1. Ընթացիկ սպասարկում

Ջրախմոցի համար իրականացվող ընթացիկ սպասարկման աշխատանքները ներառում են խճապատման աշխատանքներ և մամուռի ու բուսական մնացորդների հեռացում:

Մամուռի ու բուսական մնացորդների հեռացումը անհրաժեշտ է ապահովել պարբերաբար՝ արոտային շրջանի ընթացքում: Մամուռի ու բուսական մնացորդների հեռացումը հնարավոր է կազմակերպել առանց լրացուցիչ ծախսերի: Խճապատման ծախսերը ներկայացված են ստորև:

1.1. Խճապատում (իրականացնել՝ ըստ անհրաժեշտության)

Նկարագիր	**Չափման միավոր**	**Քանակ**	**Միավորի գին** (դրամ)	**Ընդ. արժեք** (դրամ)
խիճ	մ ^{3}	1	8 000	8 000
խճի տեղափոխում	երթ	1	15 000	15 000
աշխատուժ	մարդ/օր	1	7 000	7 000
Ընդամենը՝				**30 000**

2. Վերանորոգում

Ջրախմոցի վերանորոգման աշխատանքներն իրենց մեջ ներառում են՝ կոռոզիոն հետքերի վերացում և ներկում, ջրի փականի փոխարինում: Ստորև ներկայացված են դրանց համար նախատեսված ծախսերի գնահատականը:

2.1. Կոռոզիոն հետքերի վերացում և ներկում (իրականացնել՝ 2 տարին 1 անգամ)

Նկարագիր	**Չափման միավոր**	**Քանակ**	**Միավորի գին**(դրամ)	**Ընդ. արժեք**(դրամ)
մետաղական խոզանակ	հատ	1	2 500	2 500
հղկաթուղթ	հատ	10	100	1 000

ջրակայուն ներկ 5լ.-ոց	հատ	1	6 000	6 000
լուծիչ 1լ.-ոց	հատ	2	1 000	2 000
խոզանակ ներկելու	հատ	1	500	500
գլանակ ներկելու	հատ	1	1 500	1 500
աշխատուժ	մարդ/օր	2	7 000	14 000
Ընդամենը՝				**27 500**

2.2. Ջրի փականի փոխարինում (իրականացնել՝ ըստ անհրաժեշտության)

Նկարագիր	**Չափման միավոր**	**Քանակ**	**Միավորի գին**(դրամ)	**Ընդ. արժեք**(դրամ)
մուտքի փական, 32մմ-ոց	հատ	1	5 000	5 000
հետադարձ փական, 50մմ-ոց	հատ	1	15 000	15 000
աշխատուժ	մարդ/օր	1	7 000	7 000
Ընդամենը՝				**27 000**

Մակատեղի սպասարկում և վերանորոգում

Մակատեղի սպասարկման և վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ամեն տարի: Ստորև ներկայացված է **300մ² մակերեսով** ծածկով մակատեղի համար իրականացվող ընթացիկ սպասարկման և վերանորոգման աշխատանքների հաշվարկը:

1. Ընթացիկ սպասարկում

Մակատեղի համար իրականացվող ընթացիկ սպասարկման աշխատանքները ներառում են կուտակված գոմաղբի և ձմեռային շրջանում հավաքված ցեխի մեքենայացված հեռացում, մետաղական ծածկի ամրացում, սոնիների և փականների յուղում:Սպասարկման աշխատանքներն իրականացվում են ամեն տարի:

Ամրացման և յուղման աշխատանքները հնարավոր է կազմակերպել առանց լրացուցիչ ծախսերի: Ուստի, ստորև ներկայացված են գոմաղբի և ցեխի մեքենայացված հեռացման աշխատանքների հաշվարկը:

1.1. Կուտակված գոմաղբի և ձմեռային շրջանում հավաքված ցեխի մեքենայացված հեռացում

Նկարագիր	**Չափման միավոր**	**Քանակ**	**Միավորի գին**(դրամ)	**Ընդ. արժեք**(դրամ)
տեխնիկայի վարձակալում*	հատ	1	25 000	25 000
Ընդամենը՝				**25 000**

* Կախված վարձակալվող տեխնիկայի տեսակից՝ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ժամանակը տատանվում է: Ուստի, տարբեր տեխնիկաների համար պահանջվող ժամանակը և դրանց ժամավճարը հաշվի առնելով, ընտրվել է միջինացված գին:

2. Վերանորոգում

Մակատեղի վերանորոգման աշխատանքներն իրենց մեջ ներառում են՝ ճաղավանդակի կոռոզիոն հետքերի վերացում և ներկում, մետաղական կոնստրուկցիաների, սոնիների և փականների զոդում: Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ անհրաժեշտության:

2.1. Ճաղավանդակի կոռոզիոն հետքերի վերացում և ներկում՝ հաշվի առնելով վնասվածության աստիճանը, կլիմայական և ռելիեֆային պայմանները, բայց հնարավորության դեպքում ոչ պակաս քան 2 տարին 1 անգամ:

Նկարագիր	**Չափման միավոր**	**Քանակ**	**Միավորի գին**(դրամ)	**Ընդ. արժեք**(դրամ)
մետաղական խոզանակ	հատ	2	2500	5 000
հղկաթուղթ	մ	2	1 000	2 000
ջրակայուն ներկ	լ	10	1200	12 000
լուծիչ	լ	4	1 000	4 000
խոզանակ ներկելու	հատ	2	500	1 000
գլանակ ներկելու	հատ	2	1 500	3 000
աշխատուժ	մարդ/օր	6	7 000	42 000
Ընդամենը՝				**64 000**

2.2. Մետաղական կոնստրուկցիաների, սոնիների և փականների վերանորոգում (իրականացնել՝ ըստ անհրաժեշտության)

Նկարագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին (դրամ)	Ընդ. արժեք (դրամ)
զոդման աշխատանքներ	մարդ/օր	1	10 000	10 000
Ընդամենը՝				**10 000**

3. Ախտահանում և վնասատուների դեմ պայքար

Աշխատանքները կատարվում են արոտային շրջանի մեկնարկից առաջ և հետո, ինչպես նաև արոտային ժամանակահատվածում՝

Նկարագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին(դրամ)	Ընդ. արժեք(դրամ)
Ցողարկիչ	հատ	2	18000	36000
Աշխատուժ	մարդ/օր	4	7 000	28 000
Ախտահանիչ	գրամ	1000	6	6000
Միջատասպան	լիտր	1,5	3 000	4 500
Ընդամենը՝				**74 500**

Անասնապահի կացարանի սպասարկում և վերանորոգում

Ստորև ներկայացված է **12մ² մակերեսով** անասնապահի կացարանի (1 պատուհան, 1 դուռ, 1 ծխնելույզ) համար իրականացվող ընթացիկ սպասարկման և վերանորոգման աշխատանքների հաշվարկը: Անասնապահի կացարանի սպասարկման աշխատանքներն իրականացվում են յուրաքանչյուր տարի՝ ըստ անհրաժեշտության, իսկ վերանորոգման աշխատանքներն իրականացվում են առնվազն 2 տարին 1 անգամ:

1. Ընթացիկ սպասարկում

Անասնապահի կացարանի համար իրականացվող ընթացիկ սպասարկման աշխատանքները ներառում են կացարանի շրջակայքում ու պատերի տակ կուտակված ցեխի ու աղբի մնացորդների հեռացում, սոնիների և փականների յուղում, մետաղական ծածկի ամրացում: Մետաղական ծածկի ամրացումը, սոնիների և փականների յուղումը հնարավոր է կազմակերպել առանց լրացուցիչ ծախսերի: Սպասարկումն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ ըստ անհրաժեշտության:

1.1. Արոտային շրջանի մեկնարկից առաջ կացարանի շրջակայքում ու պատերի տակ կուտակված ցեխի ու աղբի մնացորդների հեռացում

Նկարագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին(դրամ)	Ընդ. արժեք(դրամ)
աշխատուժ	մարդ/օր	1	7 000	7 000
Ընդամենը՝				**7 000**

2. Վերանորոգում

Անասնապահի կացարանի վերանորոգման աշխատանքներն իրենց մեջ ներառում են՝ ներսի պատերի ներկում, ինչպես նաև այլ հիմնական կապիտալ վերանորոգման աշխատանքներ, օրինակ՝ տանիքի, պատերի, առաստաղի, հատակի, կողպեքի, փականի, ճաղավանդակի և այլ հնարավոր վնասվածքների վերականգնում: Վերանորոգման աշխատանքները հիմնականում իրականացվում են ըստ անհրաժեշտության:

2.1. Ներսի պատերի ներկում՝ հաշվի առնելով կացարանի սանիտարական վիճակը, բայց առնվազն 2 տարին 1 անգամ

Նկարագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին(դրամ)	Ընդ. արժեք(դրամ)
հողում, հարթեցում	մարդ/օր	1	7 000	7 000
լատեքսային ներկ	լիտր	10	1 000	10 000
խոզանակ ներկելու	հատ	1	500	500
գլանակ ներկելու	հատ	1	1 500	1 500
աշխատուժ	մարդ/օր	1	7 000	7 000
Ընդամենը՝				**26 000**

2.2. Մետաղական կոնստրուկցիաների (տանիք, ճաղավանդակ և սոնի, փական և այլն) նորոգում՝ ըստ անհրաժեշտության

Նկարագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին (դրամ)	Ընդ. արժեք (դրամ)
Զոդման աշխատանքներ	մարդ/օր	1	10 000	10 000
Ընդամենը՝				**10 000**

3. Ախտահանում և վնասատուների դեմ պայքար

Աշխատանքները կատարվում են արոտային շրջանի մեկնարկից առաջ և հետո՝

Նկարագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին(դրամ)	Ընդ. արժեք(դրամ)
Աշխատուժ	մարդ/օր	2	7 000	14 000
Ախտահանիչ	գրամ	300	6	1800
Ընդամենը՝				**15 800**

Դաշտամիջյան ճանապարհների սպասարկում և վերանորոգում

Դաշտամիջյան ճանապարհների սպասարկման և վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ամեն տարի: Ստորև ներկայացված է **3մ լայնությամբ** դաշտամիջյան ճանապարհի համար իրականացվող ընթացիկ սպասարկման և վերանորոգման աշխատանքների հաշվարկը:

1. Ընթացիկ սպասարկում

Դաշտամիջյան ճանապարհների քայքայված հատվածների ընթացիկ սպասարկման աշխատանքները ներառում են՝ ճամփեզրյա ջրահեռացման առուներում և խողովակներում փլուզումների և սելավների արդյունքում կուտակված ցեխի, աղբի և բուսական մնացորդների հեռացումը: Սպասարկման աշխատանքներն իրականացվում են ամեն տարի:

Ստորև ներկայացված են ճամփեզրյա ջրահեռացման առուներում և խողովակներում փլուզումների և սելավների արդյունքում կուտակված ցեխի, աղբի և բուսական մնացորդների մեքենայացված հեռացման աշխատանքների հաշվարկը:

1.1 Կուտակված ցեխի, աղբի և բուսական մնացորդների մեքենայացված հեռացում

Նկարագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին(դրամ)	Ընդ. արժեք(դրամ)
տեխնիկայի վարձակալում*	հատ	1	40 000	40 000
աշխատուժ	մարդ/օր	1	7 000	7 000
Ընդամենը՝				**47 000**

** Կախված վարձակալվող տեխնիկայի տեսակից՝ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ժամանակը տատանվում է: Ուստի, տարբեր տեխնիկաների համար պահանջվող ժամանակը և դրանց ժամավճարը հաշվի առնելով, ընտրվել է միջինացված գին:*

2. Վերանորոգում

Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման աշխատանքներն իրենց մեջ ներառում են՝ ճանապարհի հարթեցում, խճապատում ու ջրահեռացման խողովակների եզրային հատվածներում նախատեսված բետոնային հատվածների ամբողջականության ապահովում: Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ անհրաժեշտության:

2.1. Ճանապարհի հարթեցումը:

Նկարագիր	**Չափման միավոր**	**Քանակ**	**Միավորի գին**(դրամ)	**Ընդ. արժեք**(դրամ)
տեխնիկայի վարձակալում*	հատ	1	40 000	40 000
Ընդամենը՝				**40 000**

2.2. Խճապատում

Նկարագիր	**Չափման միավոր**	**Քանակ**	**Միավորի գին** (դրամ)	**Ընդ. արժեք** (դրամ)
խիճ	մ ^{3}	1	8 000	8 000
խճի տեղափոխում	երթ	1	15 000	15 000
աշխատուժ	մարդ/օր	1	7 000	7 000
Ընդամենը՝				**30 000**

Այլ աշխատանքներ՝ ըստ անհրաժեշտության (տանիքի, պատերի, առաստաղի, հատակի, փականի, ջրահեռացման խողովակների եզրերի բետոնի վերականգնման և այլ հնարավոր վնասվածքների վերացում):

Բոլոր աշխատանքների իրականացման համար առաջարկվում է հաշվարկում ներառել չնախատեսված ծախսեր՝ պլանավորված աշխատանքների ֆինանսավորման 10%-ի չափով:

Հավելված 1. Արոտների ենթակառուցվածքների գնահատման հարցաթերթ

Գնահատման ամսաթիվ _____2020թ. Գնահատող՝ _____

_____ մարզի _____ համայնքի _____ բնակավայրի արոտային ենթակառուցվածքների վիճակի (օգտագործման և պահպանման) գնահատում

ՀՀ	Արոտավայրի անուն	Ենթակառուց-վածքի տեսակ	GPS կոորդինատ	Հիմնանո-րոգման կամ կառուց-ման տարի	Չափորոշիչներ							
					Ենթ.-ի առկա-յություն այո-1 ոչ-2	Ենթ.-ի ներկա վիճակ լավ-1 միջին-2 վատ-3	Ենթ.-ի բարելավ-ման անհրա-ժեշտություն այո-1 ոչ-2	Ենթ.-ի օգտագոր-ծում այո-1 ոչ-2 մասամբ-3	Ենթ.-ի սպա-սարկ-ման տարածք (հա)	Ենթ.-ից օգտվող տնային տնտեսութ-յունների թիվը	Բարելավ-ված արոտներից օգտվող ԽԵԿ-երի քանակը	Եթե այլ բնակավայրեր օգտվում են ենթակառուց-վածքից, ապա նշել բնակավայրերի անունները
1												
2												
3												
4												
5												
6												
7												

Մեկնաբանություն՝

_____

_____

_____

Չափորոշիչ	Գնահատական	Բացատրություն
Ենթակառուցվածքի առկայություն	Այո - 1	Ենթակառուցվածքը առկա է:
	Ոչ - 2	Ենթակառուցվածքը բացակա է:
Ենթակառուցվածքի ներկա վիճակ	Լավ - 1	Գնահատվում է «լավ», եթե նշված բոլոր պայմանները բավարարված են: *Ջրելատեղ՝* ***ջուրը*** *առկա է (ըստ անհրաժեշտության), սնուցող* ***խողովակաշարը*** *ամբողջական է (փսասված չէ),* ***փականները*** *սարքին են,* ***ջրահեռացումը*** *լավ է կատարվում,* ***ջրհավաք ավազանը*** *մամռակալած չէ:* *Կացարան՝ առկա են ապրելու համար պայմաններ՝ դուռը, պատուհանը սարքին վիճակում են, փակվում են:* *Հանապարհ՝ հարթ է և անցանելի, չկան քայքայված (էռոզացված) հատվածներ, փլուզումներ և դժվար անցանելի հատվածներ:* *Կթի սրահ՝ առկա է մշտահոս ջուր, էլեկտրաէներգիայի մշտական աղբյուր, սառեցման ավազանը ամբողջական է, փսասված չէ, ծածկը ամուր է և ամբողջական:* *Մակատեղի՝ ցանկապատը ամուր է, չկան թուլացած և ջարդված հատվածներ, տարածքը հարթ է, ծածկով հատվածի ծածկը պահպանված է:*
	Միջին - 2	Գնահատվում է «միջին», եթե առկա է նշվածներից 1-2 թերություն: *Ջրելատեղ՝* ***ջուրը*** *առկա է, բայց ոչ մշտական,* ***խողովակաշարը*** *հիմնականում ամբողջական է (հիմնականում փսասված չէ),* ***փականները*** *հիմնականում սարքին են,* ***ջրահեռացումը*** *լավ է կատարվում, սակայն կա թեթև մամռակալում,* ***ջրհավաք ավազանը*** *ներկված է, բայց կարիք ունի թարմացման:* *Կացարան՝ առկա են ապրելու համար բարվոք պայմաններ՝ դուռը, պատուհանները ամբողջական են, կարող են լավ չփակվել:* *Հանապարհ՝ հիմնականում հարթ է և անցանելի, տեղ-տեղ կան մասնակի էռոզացված հատվածներ՝ փլուզումներ:* *Կթի սրահ՝ առկա է մշտահոս ջրի հնարավորություն, էլեկտրաէներգիայի աղբյուր (շարժական, ոչ մշտական), սառեցման ավազանը գործում է, ծածկը մասամբ փսասված է և նորոգման կարիք ունի:* *Մակատեղի՝ ցանկապատը հիմնականում ամուր է, տեղ-տեղ կան թուլացած հատվածներ, տարածքը հիմնականում հարթ է, տեղ-տեղ կան փոսեր, ծածկով հատվածի ծածկը պահպանված է, սակայն ունի նորոգման կարիք:*
	Վատ - 3	Գնահատվում է «վատ», եթե առկա է նշվածներից 1-2 թերություն: *Ջրելատեղ՝* ***ջուրը*** *առկա չէ,* ***խողովակաշարը*** *ամբողջական չէ (փսասված է),* ***փականները*** *սարքին չեն,* ***ջրահեռացումը*** *վատ է կատարվում, սպասարկման տարածքը քայքայված է,* ***ջրհավաք ավազանը*** *կոտրված է, ժանգոտած և մամռակալած:* *Կացարան՝ չկան ապրելու համար պայմաններ՝ տանիքը քայքայված է, դուռը և պատուհանը կոտրված են կամ չկան:* *Հանապարհ՝ դժվարանցանելի է կամ հնարավոր չէ անցնել՝ հարթ չէ, կան փոսեր, ջրակույտեր, փլուզումներ:* *Կթի սրահ՝ առկա չէ հոսող ջուր կամ, սառեցման ավազանը չի գործում, ծածկը մասամբ կամ ամբողջությամբ քանդված է:* *Մակատեղի՝ ցանկապատը ամուր չէ, կան թուլացած և ջարդված հատվածներ, տարածքը հարթ չէ, ծածկով հատվածի ծածկը մասամբ կամ ամբողջությամբ քանդված է:*
Ենթակառուցվածքի բարելավման անհրաժեշտություն	Այո - 1	Ենթակառուցվածքը բարելավման կարիք ունի:
	Ոչ - 2	Ենթակառուցվածքը բարելավման կարիք չունի:
Ենթակառուցվածքի օգտագործում	Այո - 1	Ենթակառուցվածքը ամբողջությամբ օգտագործվում է:
	Ոչ - 2	Ենթակառուցվածքը չի օգտագործվում:
	Մասամբ - 3	Ենթակառուցվածքը օգտագործվում է, սակայն դրանից օգտվում են ավելի քիչ թվով կենդանիներ, քան այն ի վիճակի է սպասարկել:
Ենթակառուցվածքի սպասարկման տարածքը (հա)		Քանի հեկտար արոտավայրից օգտվող կենդանիներն են օգտվում տվյալ ենթակառուցվածքից: Այսինքն՝ տվյալ ենթակառուցվածքից օգտվելու արդյունքում քանի հա արոտավայրի վրա է հնարավոր կազմակերպել արածեցում:
2011-2018թթ. ընթացքում համայնքային միջոցներով կառուցված/ վերականգնված ենթակառուցվածքներ		

Հավելված 2-ը տե՛ս ներդիրում

Հավելված 3. «Արոտների ենթակառուցվածքներից օգտվելու և շահագործելու կանոններ» թերթիկ

Անանուն	Համայնք	Բնակավայր	Արոտավայր	Ենթակառուցվածք	GPS կոորդինատ	Հիմնանորոգ-ման կամ կառուցման տարի	Ենթ.-ի առկայություն այո-1 ոչ-2	Ենթ.-ի ներկա վիճակ լավ-1 միջին-2 վատ-3	Ենթ.-ի բարելավման անհրաժեշտություն այո-1 ոչ-2	Ենթ.-ի օգտագործում այո-1 ոչ-2 մասամբ-3	Ենթ.-ի սպասարկ-ման տարածքը (հա)	Ենթ.-ից օգտվող տնային տնտեսություն-ների թիվը	Բարելավված արոտներից օգտվող ԽԵԿ-երի քանակը	Եթե այլ բնակավայրեր օգտվում են ենթ.-ից, ապա նշել բնակավայրերի անունները

Ջրախմոց

Արոտային շրջանի մեկնարկից առաջ

1. Ուշադրություն դարձնել ջրհավաքների՝ կապտաժների ամբողջականությանը և այն մաքրել ձմռան ընթացքում հողի ու բուսական մնացորդների կուտակումներից: Եթե հայտնաբերվել են անսարքություններ՝ բետոնե կոնստրուկցիայի վնասվածք, կափարիչի կամ խողովակի վնասվածք, խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային: Բացի այդ, եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա անձամբ կազմակերպել խնդիրների վերացման համապատասխան աշխատանքները:
2. Ուշադրություն դարձնել կապտաժից դեպի ջրախմոց տանող խողովակների ու փականների ամբողջականությանը և ստուգել դրանց անխափան աշխատանքը: Եթե հայտնաբերվել են անսարքություններ՝ խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային: Բացի այդ, եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա անձամբ կազմակերպել խնդիրների վերացման համապատասխան աշխատանքները:
3. Հետևել ջրախմոցի ջրհավաք կիսախողովակի ամբողջականությանը: Եթե հայտնաբերվել է վնասվածք, խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային: Բացի այդ, եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա անձամբ կազմակերպել խնդիրների վերացման համապատասխան աշխատանքները:
4. Եթե ջրախմոցի ջրհավաք կիսախողովակի և մետաղական հենակների վրա առկա են կոռոզիայի ենթարկված հատվածներ՝ խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային: Բացի այդ, եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա անձամբ կազմակերպել խնդիրների վերացման համապատասխան աշխատանքներ՝ մշակել կոռոզիայի ենթարկված հատվածները և ջրակայուն ներկով ներկել:
5. Ջրախմոցի սպասարկման տարածքը մաքրել կուտակված գոմաղբից, բուսական մնացորդներից և այլ աղբից:

Արոտային շրջանում

1. Շահագործման ընթացքում ջրախմոցը զերծ պահել մամռակալումից, պարբերաբար մաքրելով հեռացնել բուսական գոյացությունները և անցանկալի առարկաները ջրհավաք կիսախողովակից:

2. Բացառել ջրային կուտակումները ջրախմոցի սպասարկման տարածքում: Եթե կուտակումը անսարքության պատճառով է, ապա խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային: Բացի այդ, եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա անձամբ կազմակերպել խնդիրների վերացման համապատասխան աշխատանքները:
3. Եթե շահագործման ընթացքում առաջացել են մեխանիկական վնասվածքներ, ապա խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային: Բացի այդ, եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա անձամբ կազմակերպել խնդիրների վերացման համապատասխան աշխատանքները:

Արոտային շրջանի ավարտից հետո

1. Ջրախմոցի ջրհավաք կիսախողովակից և այն սպասարկող խողովակների համակարգից կատարել ջրի դատարկում:

Մակատեղ

Արոտային շրջանի մեկնարկից առաջ

1. Ուշադրություն դարձնել մետաղական կոնստրուկցիաների, սոնիների, փականների և այլ դետալների ամբողջականության վրա: Անսարքություններ հայտնաբերելու դեպքում՝ խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային: Բացի այդ, եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա անձամբ կազմակերպել խնդիրների վերացման համապատասխան աշխատանքները:
2. Եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է ենթակառուցվածքների պահպանության պարտավորվածություն, կատարել սոնիների և փականների յուղման աշխատանքներ:
3. Վերացնել ձմեռային ժամանակահատվածում տեղի ունեցած ցեխի կուտակումները մակատեղի բոլոր դետալների վրայից:
4. Իրականացնել մետաղական կոնստրուկցիաների, սոնիների, փականների և այլ դետալների ախտահանում՝ ցողարկիչով ցողարկելով քիմիական ախտահանիչներով:

Արոտային շրջանում

1. Ուշադրություն դարձնել ձնհալի, անձրևաջրերի և տարբեր տիպի մակերևութային հոսքերի հեռացմանը մակատեղի տարածքից:

2. Ծահագործման ընթացքում, ժամանակին կազմակերպել գոմաղբի հեռացումը՝ մետաղական դետալների հետ շփման արդյունքում կոռոզիան կանխելու նպատակով:

3. Ծածկի առկայության դեպքում, հետևել ծածկի մետաղական թիթեղների ամրացվածության աստիճանին՝ քամուց չվնասվելու նպատակով: Եթե հայտնաբերվել է անսարքություն, ապա խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային: Բացի այդ, եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա անձամբ կազմակերպել խնդիրների վերացման համապատասխան աշխատանքները:

Արոտային շրջանի ավարտից հետո

1. Ստուգել ենթակառուցվածքի ամբողջականությունը: Եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է ենթակառուցվածքների պահպանության պարտավորվածություն, ապա անհրաժեշտության դեպքում կատարել ներկման աշխատանքներ՝ աշնանային և ձմեռային խոնավ եղանակին մետաղական կոնստրուկցիաները կոռոզիայից պաշտպանելու նպատակով:

2. Իրականացնել մետաղական կոնստրուկցիաների, սոնիների, փականների և այլ դետալների ախտահանում՝ ցողարկիչով ցողարկելով քիմիական ախտահանիչներով:

Անասնապահի կացարան

Արոտային շրջանի մեկնարկից առաջ

1. Անասնապահի կացարանի տարածքի բարեկարգում՝

   ա) հիմնապատերի տակ կուտակված հողաշերտի ու աղբի հեռացում,

   բ) անձրևաջրերի, ձնհալից գոյացած ջրերի, տանիքից հոսող ջրերի և տարբեր տիպի մակերևութային հոսքերի հեռացման ապահովում:

2. Եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է առաջացած

խնդիրների վերացման պարտավորվածություն, ապա երկու տարին մեկ կազմակերպել ներքին հարդարման աշխատանքներ՝ պատեր, հատակ: Ինքնուրույն խնդիրը լուծել չկարողանալու դեպքում տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային:

3. Իրականացնել ախտահանում՝ ցողարկիչով ցողարկելով քիմիական ախտահանիչներով:

Արոտային շրջանում

1. Վառարանի տեղադրման համար օգտագործել ծխատարը, այլ ոչ թե պատուհանը:

2. Եթե վարձակալության պայմանագրում ամրագրված է ենթակառուցվածքների պահպանության պարտավորվածություն, ապա վերացնել շահագործման ընթացքում առաջացած խնդիրները՝ տանիք, առաստաղ, դուռ, պատուհան, փական, սոնի, ճաղավանդակ և այլն: Ինքնուրույն խնդիրը լուծել չկարողանալու դեպքում տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային:

Արոտային շրջանի ավարտից հետո

1. Ձմեռային ժամանակահատվածում անասնապահի կացարանում բորբոսասնկերի բազմացումն ու զարգացումը բացառելու նպատակով բացված վիճակում թողնել կացարանի օդանցքը՝ ապահովելով օդափոխությունը:

2. Իրականացնել ախտահանում՝ ցողարկիչով ցողարկելով քիմիական ախտահանիչներով:

Դաշտամիջյան ճանապարհ

Արոտային շրջանի մեկնարկից առաջ

1. Ուշադրություն դարձնել ձմեռային և վաղ գարնանային ձնհալների և սելավաջրերի պատճառով դաշտամիջյան ճանապարհներին առաջացած փլուզումներին: Եթե հայտնաբերվել են փլուզումներ, խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային, եթե տեղում անձամբ հնարավոր չէ կազմակերպել խնդիրների վերացման աշխատանքների կազմակերպում:

2. Ուշադրություն դարձնել սելավաջրերի ու փլուզումների արդյունքում

ճանապարհի վրա հայտնված քարերի ու աղբի կուտակումներին: Եթե հայտնաբերվել են նման խնդիրներ, ապա դրանց մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային, եթե տեղում անձամբ հնարավոր չէ կազմակերպել խնդիրների վերացման աշխատանքների կազմակերպում:

3. Ուշադրություն դարձնել ջրահեռացման խողովակներում կուտակված աղբի, հողային նստվածքների և բուսական մնացորդների կուտակումներին, ջրահեռացման խողովակների եզրերի բետոնային հատվածների ամբողջականությանը, և եթե տեղում հնարավոր չէ կազմակերպել խնդիրների վերացման աշխատանքներ, ապա դրանց մասին անհրաժեշտ է տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային:

Արոտային շրջանում

1. Հետևել ճամփեզրյա ջրահեռացման առուների ամբողջականությանն ու մաքրությանը: Եթե նկատում եք ամբողջականության խախտում կամ աղբի կուտակումներ, ապա խնդրի մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային:

2. Դաշտամիջյան ճանապարհներին, շահագործման ընթացքում, փորձել նվազագույնի հասցնել մեքենաների և գյուղատնտեսական տեխնիկայի անիվների կողմից առաջացած ակոսային և գծային անհարթությունները և խճապատված շերտի ամբողջականությունը:

3. Ուշադրություն դարձնել դաշտամիջյան ճանապարհների ջրահեռացման խողովակների գլխամասերում նախատեսված ջրհավաքի և ջրահեռացման բետոնային հատվածների ամբողջականությանը: Նման խնդիրներ հայտնաբերելու դեպքում դրանց մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային:

Արոտային շրջանի ավարտից հետո

1.Ուշադրություն դարձնել դաշտամիջյան ճանապարհների ամբողջականության և ջրահեռացման համակարգի մաքրությանն ու անխափան աշխատանքին: Խնդիրներ հայտնաբերելու դեպքում դրանց մասին տեղեկացնել համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյային:

Հայտնաբերված կամ շահագործման ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ անհրաժեշտ է տեղեկացնել համայնքապետարանին և տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

1. Ենթակառուցվածքի տեսակը *(օրինակ՝ մակատեղ);*
2. Ենթակառուցվածքի գտնվելու վայրը՝ բնակավայրի և հանդամասի անունը *(օրինակ՝ Արտավան բնակավայր, Քարի հետև հանդամաս);*
3. Խնդրի նկարագրությունը *(օրինակ՝ բացակայում է ճաղավանդակը);*
4. Խնդիրը առաջին անգամ նկատելու ամսաթիվը *(օրինակ՝ 5 հունիս 2020թ);*
5. Հնարավորության դեպքում կցել անսարքության նկար:

Տեղեկատվության փոխանցման համար կարող եք օգտվել նշված կապի միջոցներից **որևէ մեկից՝**

(Ցուցում ՏԻՄ-ին՝ Ֆերմերին տրամադրելուց առաջ՝ (1) թողնել վերևում նշված տարբերակներից միայն նրանք, որոնք առավել արդյունավետ եք համարում խնդիրների բացահայտման ու գրանցման տեսանկյունից և (2) լրացնել բաց թողնված հատվածները: Տրամադրելուց առաջ սույն (ցուցում ՏԻՄ-ին) պարբերությունն անհրաժեշտ է ջնջել):

Զանգահարել՝

_____-ին,

անուն, ազգանունը

հեռ.՝_____

նշել հեռախոսահամարը

Գրել համայնքապետարանի Ֆեյսբուքյան էջին՝

_____

ավելացնել էջի հղումը կամ անվանումը

Օգտվել համայնքապետարանի կայքի աջ մասում

ավելացնել կայքի հասցեն

տեղադրված ***«Գրանցել խնդիր»*** պատուհանից

Հավելված 4. Գալիք տարվա համար արոտների ենթակառուցվածքների պահպանման, սպասարկման և վերանորոգման ընդհանուր ծախսի հաշվարկի օրինակ

Սպասարկում և վերանորոգում

Ենթակառուցվածքի տեսակ	**Ենթակառ. քանակ**	**Գնահատված ծախսեր, ՀՀԴ**	**Ընդ., ՀՀԴ**
(1)	**(2)**	**(3)**	**(4=2x3)**
Մակատեղ			
<u>Սպասարկման աշխատանքներ</u>			
Կուտակված գոմաղբի մեքենայացված հեռացում	8	25000	200,000
<u>Վերանորոգման աշխատանքներ</u>			
Սռնիների վերանորոգում	4	10000	40,000
Ճաղավանդակի կոռոզիոն հետքերի վերացում և ներկում	5	57000	285,000
<u>Ընդամենը</u>			**525,000**

Մոնիթորինգ

Ենթակառուցված քի տեսակ	Երկկողմանի հեռավ. համայնքից/բնակավայրից, կմ	Ծախսի նորմա, լ/կմ	Քանակ, լ	Միավորի գին, ՀՀԴ/լ	Ընդ. Արժեք, ՀՀԴ
(1)	**(2)**	**(3)**	**(4=2x3)**	**(5)**	**(6=4x5)**
Մակատեղ					
<u>Մոնիթորինգայի աշխատանքներ</u>					
Տրանսպորտային ծախս					
Մակատեղ 1	40	0.15	6.00	420	2,520
Մակատեղ 2	50	0.15	7.50	420	3,150
Մակատեղ 3	34	0.15	5.10	420	2,142
Մակատեղ 4	50	0.15	7.50	420	3,150
Մակատեղ 5	40	0.15	6.00	420	2,520
Մակատեղ 6	22	0.15	3.30	420	1,386
Մակատեղ 7	8	0.15	1.20	420	504
Մակատեղ 8	26	0.15	3.90	420	1,638
<u>Ընդամենը</u>					**17,010**

Հավելված 2. Արոտների ենթակառուցվածքների մոնիտորինգի արդյունքների շտեմարան (բազա)

Ամսաթիվ	Համայնք	Բնակավայր	Արոտավայր	Ենթակառուցվածք	GPS կոորդինատ	Հիմնանորոգ-ման կամ կառուցման տարի	Ենթ.-ի առկայություն այո-1 ոչ-2	Ենթ.-ի ներկա վիճակ լավ-1 միջին-2 վատ-3	Ենթ.-ի բարելավման անհրաժեշտություն այո-1 ոչ-2	Ենթ.-ի օգտագործում այո-1 ոչ-2 մասամբ-3	Ենթ.-ի սպասարկ-ման տարածքը (հա)	Ենթ.-ից օգտվող տնային տնտեսություն-ների թիվը	Բարելավված արոտներից օգտվող ԽԵԳ-երի քանակը	Եթե այլ բնակավայրեր օգտվում են ենթ.-ից, ապա նշել բնակավայրերի անունները

*Ուղեցույցը մշակվել է
«Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում»
ծրագրի աջակցությամբ, որն իրականացվում է
«Ռազմավարական զարգացման գործակալություն»
հասարակական կազմակերպության կողմից՝
Շվեյցարիայի զարգացման և համագործակցության
գործակալության ֆինանսավորմամբ։*

«Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ